Հավելված N 3
ՀՀ վարչապետի N 844 - Ա որոշման

Կ Ա Ր Գ

ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Կլիմայի փոփոխության հարցերով խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) ձևավորման և գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները: Խորհուրդն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, «Կլիմայի մասին» օրենքով, այլ օրենսդրական և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով և սույն կարգով:

2. Խորհրդի նպատակը «Կլիմայի մասին» օրենքով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն աջակցելն է երկրի կլիմայական քաղաքականության մշակման և իրականացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնված պարտավորությունների ու հանձնառությունների կատարման գործընթացներում:

3. Խորհրդի խնդիրներն են՝

1) Միավորված ազգերի կազմակերպության «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիայից (այսուհետ՝ կոնվենցիա), Փարիզյան համաձայնագրից (այսուհետ՝ համաձայնագիր) և Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրից (այսուհետ՝ ՀԸԳՀ) բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների ու հանձնառությունների կատարմանն օժանդակելը.

2) «ՄԱԿ-ի կայուն զարգացման օրակարգ 2030» 13-րդ նպատակի (գործողություն հանուն կլիմայի) իրականացմանն օժանդակելը.

3) Հայաստանի Հանրապետության կլիմայական քաղաքականության բաղադրիչներով նախատեսված միջոցառումների կատարմանն օժանդակելը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրով և Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով

նախատեսված՝ կլիմայի փոփոխության ոլորտին վերաբերելի միջոցառումների կատարմանն օժանդակելը:

4. Խորհրդի աշխատանքների արդյունավետությունն ապահովելու, քննարկվող հարցերի վերաբերյալ մասնագիտական և փորձագիտական աջակցություն (խորհրդատվություն, առաջարկություններ, եզրակացություններ, կարծիքներ, վերլուծական նյութեր, զեկույցներ, հաշվետվություններ) ստանալու նպատակով խորհրդի ներքո ձևավորվում են աշխատանքային խմբեր:

ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5. Խորհուրդը բաղկացած է 25 անդամից (ներառյալ խորհրդի նախագահը և նախագահի տեղակալը): Խորհրդի կազմը ձևավորվում է պետական մարմինների, հասարակական միավորումների՝ բացառությամբ գիտական կազմակերպություն հանդիսացող հասարակական միավորումների հնգական ներկայացուցիչներից (այսուհետ՝ հասարակական միավորում), գիտական կազմակերպությունների չորսական ներկայացուցիչներից և չորս տեղական ինքնակառավարման մարմինների մեկական ներկայացուցիչներից:

6. Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության փոխվարչապետն է: Խորհրդի անհատական կազմը հաստատվում է խորհրդի նախագահ փոխվարչապետի որոշմամբ:

7. Համայնքներից խորհրդի կազմում ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացմամբ՝ համայնքների ղեկավարների առաջարկությամբ ընտրված չորս համայնքի ղեկավարների տեղակալներ՝ հաշվի առնելով համայնքների բնակչության թվաքանակով առավել խոշոր կամ կլիմայական փոփոխությունների ազդեցությունների նկատմամբ առավել խոցելի լինելը:

8. Հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրությունն իրականացվում է սույն կարգի 4-րդ գլխով սահմանված կարգով:

9. Խորհրդի իրավասություններն են՝

1) կոնվենցիայից, համաձայնագրից և ՀԸԳՀ-ից բխող՝ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների և հանձնառությունների կատարման ընթացքի և արդյունքների գնահատումը և ըստ անհրաժեշտության՝ առաջարկություններ ներկայացնելը, այդ թվում՝ կլիմայական քաղաքականության բաղադրիչների հաստատման կամ վերանայման վերաբերյալ.

2) կոնվենցիայի և համաձայնագրի ներքո ազգային զեկույցների և հաշվետվությունների նախագծերի քննարկումը.

3) երկրի կլիմայական քաղաքականության նպատակադրումների, իրականացման ընթացքի ու արդյունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության տարեկան հաշվետվության քննարկումը և դրա վերաբերյալ եզրակացություններ ու առաջարկություններ ներկայացնելը.

4) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրում ընդգրկված կլիմայի փոփոխության մեղմման ու հարմարվողականության վերաբերյալ ռազմավարական և ծրագրային փաստաթղթերի, նորմատիվ իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ եզրակացություն տալը՝ լիազոր մարմնի առաջարկությամբ.

5) կոնվենցիայից և համաձայնագրից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը և խորհրդատվություն տրամադրելը՝ ներառյալ կլիմայական ֆինանսավորման գործիքների վերաբերյալ.

6) առաջիկա տարվա քաղաքականության գերակայությունների, պետական մարմիններին հատկացվելիք ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակների քննարկումը և դրանց վերաբերյալ եզրակացություն ներկայացնելը.

7) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրվելիք, ինչպես նաև արտաքին և ներքին այլ աղբյուրներից ստացվելիք վարկային և դրամաշնորհային, այդ թվում՝ տեխնիկական աջակցության, միջոցների, ինչպես նաև այլ փոխառությունների հաշվին իրականացվելիք կլիմայի փոփոխության մեղմմանն ու հարմարվողականությանն առնչվող ծրագրային նախաձեռնությունների քննարկումը և եզրակացություններ ներկայացնելը.

8) կլիմայական քաղաքականության մասով Հայաստանի Հանրապետության համար նոր միջազգային պարտավորություններ առաջացնող կամ հանձնառություններ ենթադրող միջազգային պայմանագրերի նախագծերի և նախաձեռնությունների քննարկումը և եզրակացություն ներկայացնելը:

10. Խորհուրդն իր իրավասությունների իրականացման ընթացքում՝

1) եզրակացություններ կամ առաջարկություններ է ներկայացնում իրավական ակտերի նախագծերի, զեկույցների, հաշվետվությունների, ծրագրային նախաձեռնությունների և դրանց իրականացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ.

2) քննարկում է վերլուծություններ, ուսումնասիրություններ, զեկույցներ, կարծիքներ, տեղեկանքներ և այլ նյութեր.

3) որոշումներ է ընդունում խորհրդի գործունեության ապահովման հետ կապված հարցերի վերաբերյալ, այդ թվում՝ որպես խորհրդի անդամ՝ հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների լիազորությունները ժամկետից շուտ դադարեցնելու մասին:

11. Խորհրդի նախագահը՝

1) համակարգում է խորհրդի աշխատանքները.

2) հրավիրում է խորհրդի հերթական և արտահերթ նիստեր.

3) նախագահում է խորհրդի նիստերը.

4) հավանություն է տալիս խորհրդի նիստի օրակարգի նախագծին և ստորագրում խորհրդի նիստերի արձանագրությունները.

5) հավանություն է տալիս է խորհրդի նիստերին սույն կարգի 52-րդ կետով նախատեսված դիտորդի կարգավիճակով հրավիրվող անձանց ցանկին.

6) իրականացնում է խորհրդի բնականոն գործունեության ապահովման հետ կապված այլ գործողություններ:

12. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում խորհրդի նախագահի լիազորություններն իրականացնում է խորհրդի նախագահի տեղակալը:

13. Խորհրդի անդամը՝

1) հանդես է գալիս որպես հարցը նախապատրաստող և զեկուցող.

2) ներկայացնում է կարծիք, առաջարկություն, հաշվետվություն կամ անհրաժեշտ այլ տեղեկատվություն իր կողմից ներկայացվող գերատեսչության, համայնքի կամ կազմակերպության աշխատանքների վերաբերյալ.

3) ելույթ է ունենում քննարկվող հարցերի վերաբերյալ և հարցեր ուղղում զեկուցողներին.

4) առաջարկություն է ներկայացնում նիստի օրակարգի վերաբերյալ.

5) առաջարկություն է ներկայացնում խորհրդի նախագահին արտահերթ նիստ հրավիրելու վերաբերյալ՝ նիստի օրակարգի նախագծի, անցկացման ձևաչափի և ամսաթվի առաջարկվող միջակայքի նշմամբ՝ նկատի ունենալով սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետը:

ԳԼՈՒԽ 3. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

14. Քարտուղարության գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարի կողմից նշանակված՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

15. Քարտուղարությունը՝

1) իրականացնում է խորհրդի գործավարությունը և խորհրդի աշխատանքների ընթացիկ սպասարկումը.

2) իրականացնում է խորհրդի նիստերի հետ կապված կազմակերպական աշխատանքները, այդ թվում՝ օրակարգի նախագծի նախապատրաստումը՝ հաշվի առնելով նաև սույն կարգի 42-րդ և N 4 հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված լրացուցիչ հարցեր ներառելու առաջարկությունները, արձանագրությունների կազմումը.

3) հետևում է խորհրդի որոշումների կատարման ընթացքին և արդյունքների մասին զեկուցում խորհրդին.

4) սույն կարգով սահմանված ժամկետներում խորհրդի նիստերի արձանագրությունները և հաշվետվությունները հրապարակում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում և տրամադրում դրանք խորհուրդը նախագահող՝ Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի գրասենյակ.

5) իրականացնում է խորհրդի անդամների և աշխատանքային խմբերի անդամների մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքները.

6) սույն կարգի 34-րդ կետով նախատեսված հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում խորհրդի նիստի օրակարգի նախագծում ներառում է խորհրդի անդամի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու վերաբերյալ որոշման նախագիծը:

16. Կարողությունների զարգացմանը և աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը նպաստելու նպատակով քարտուղարությունը կարող է օգտվել զարգացման գործընկերների տեխնիկական աջակցությունից՝ վերջիններիս կողմից խորհրդատուի ներգրավման կամ նյութատեխնիկական աջակցության տրամադրման միջոցով:

ԳԼՈՒԽ 4. ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԳԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

17. Խորհրդի կազմում ընդգրկվելու նպատակով հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների ընտրությունը կատարվում է մրցութային հիմունքներով: Հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների համար կազմակերպվում են առանձին մրցույթներ:

18. Թեկնածության հայտեր ընդունելու վերաբերյալ հայտարարությունը մրցույթից առնվազն 15 աշխատանքային օր առաջ հրապարակվում է լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

19. Հայտարարության մեջ պետք է ներառվեն առնվազն հետևյալ տվյալները՝

1) հայտեր ընդունելու համար պատասխանատու անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

2) հայտեր ներկայացնող կազմակերպությանը ներկայացվող պահանջները և հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.

3) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

20. Հասարակական միավորումները և գիտական կազմակերպությունները կարող են առաջադրել խորհրդի անդամի թեկնածություն, եթե առնվազն 5 տարի գործունեություն են ծավալել շրջակա միջավայրի պահպանության, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտներում:

21.Հայտարարության հրապարակման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում սույն կարգի 20-րդ կետով ամրագրված պահանջին համապատասխանող կազմակերպությունները հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստով քարտուղարություն են ներկայացնում կազմակերպության ղեկավարի կողմից ստորագրված հայտ, որը պետք է ներառի՝

1) կազմակերպության կողմից ներկայացվող անձի անձնագրի պատճենը, ինքնակենսագրությունը և հետադարձ կապի համար անհրաժեշտ տվյալները.

2) տեղեկատվություն կազմակերպության կողմից շրջակա միջավայրի պահպանության, կլիմայի փոփոխության մեղմման և հարմարվողականության ոլորտներում գործունեության մասին.

3) կազմակերպության հետ կապի տվյալները՝ իրավաբանական անձի հասցե, հեռախոսահամար և էլեկտրոնային փոստի հասցե:

22. Հայտի ստացման վերաբերյալ կազմակերպությունները ծանուցվում են պահանջվող տեղեկատվությունն ստանալուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ էլեկտրոնային փոստով:

23. Հայտի ամբողջականությունն ու սույն կարգի պահանջներին համապատասխանությունն ստուգում է քարտուղարությունը: Փաստաթղթերը թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքերում հայտ ներկայացնողը դրա մասին ծանուցվում է էլեկտրոնային փոստով քարտուղարության կողմից փաստաթղթերն ստանալուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում, և նրան տրամադրվում է երկու աշխատանքային օր՝ թերությունները շտկելու համար:

24. Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում՝ ներկայացված հայտին ընթացք չի տրվում:

25. Թեկնածուների ընտրությունը կատարվում է հայտեր ներկայացնելու ժամկետը լրանալու օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում:

26. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են սույն կարգի 5-րդ կետով նախատեսված թվով հասարակական միավորումներ և գիտական կազմակերպություններ, ապա այդ կազմակերպությունները ընտրվում են որպես խորհրդի անդամներ:

27. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են սույն կարգի 5-րդ կետով նախատեսված թվից ավելի հասարակական միավորումներ և (կամ) գիտական կազմակերպություններ, ապա համապատասխանաբար կազմվում են թեկնածու կազմակերպությունների առանձին ցանկեր՝ նշելով նաև ներկայացուցիչների անունները: Այս դեպքում խորհրդի անդամների ընտրությունը կատարվում է առանձին ցանկերում ընդգրկված թեկնածուների միջև էլեկտրոնային քվեարկություն կազմակերպելու միջոցով: Քվեարկության ընթացքում թեկնածուներից յուրաքանչյուրը նշում է կատարում առնվազն մեկ թեկնածուի անվան դիմաց: Թեկնածուն չի կարող քվեարկել ինքն իր օգտին: Որպես խորհրդի անդամ՝ յուրաքանչյուր ցանկից ընտրվում են քվեարկության արդյունքներով առավել թվով ձայներ ստացած անհրաժեշտ թվով թեկնածուները: Թափուր տեղերի համալրման նպատակով գործընթացը շարունակվում է մինչև անհրաժեշտ թվաքանակի լրանալը:

28. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են սույն կարգի 5-րդ կետով նախատեսված թվից պակաս թվաքանակով հասարակական միավորումներ և (կամ) գիտական կազմակերպություններ, ապա արդեն իսկ ընտրված հասարակական միավորումների և (կամ) գիտական կազմակերպությունների խմբերը, չբավարարող թվաքանակը համալրելու նպատակով, 7-օրյա ժամկետում ներկայացնում են թեկնածուների վերաբերյալ համատեղ առաջարկություն:

29. Քարտուղարությունը, ստանալով սույն կարգի 28-րդ կետում նշված առաջարկությունը, գրավոր կարգով դիմում է առաջադրված թեկնածուներին և այն հասարակական միավորման կամ գիտական կազմակերպության ղեկավարին, որին

թեկնածուն ներկայացնելու է՝ մրցույթին մասնակցելու վերաբերյալ համաձայնություն ստանալու և սույն կարգով նախատեսված հայտերը ներկայացնելու նպատակով:

30. Համաձայնության դեպքում՝ առաջադրված թեկնածուները քարտուղարության կողմից մրցույթին մասնակցելու առաջարկությունը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հայտերը սույն կարգով նախատեսված ընթացակարգով ներկայացնում են քարտուղարություն՝ սույն կարգի 21-րդ և 23-րդ կետերով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

31.Սույն կարգի 25-րդ կամ 30-րդ կետերով սահմանված ժամկետի ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի նախագահի տեղակալը խորհուրդը նախագահող փոխվարչապետին է ներկայացնում խորհրդի անհատական կազմը հաստատելու մասին փոխվարչապետի որոշման նախագիծը:

32. Ընտրությունների և քվեարկության արդյունքների վերաբերյալ քարտուղարությունը կազմում է գրավոր արձանագրություններ, որոնք թեկնածուների ցանկերի հետ միասին ընտրությունների ավարտի օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակվում են լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

33. Հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչները որպես խորհրդի անդամ ընտրվում են 4 տարի ժամկետով:

34. Որպես խորհրդի անդամ՝ հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների լիազորությունները, քարտուղարության ներկայացմամբ, կարող են վաղաժամկետ դադարեցվել հետևյալ դեպքերում՝

1) խորհրդի կազմում ընդգրկված հասարակական միավորման կամ գիտական կազմակերպության ղեկավարի կողմից ներկայացվել է համապատասխան դիմում.

2) հասարակական միավորման կամ գիտական կազմակերպության գործունեությունը դադարել է.

3) մեկ տարվա ընթացքում խորհրդի անդամ հանդիսացող ներկայացուցիչը չի մասնակցել խորհրդի նիստերի կեսից ավելի նիստերին:

35. Խորհրդի անդամ հանդիսացող հասարակական միավորման կամ գիտական կազմակերպության ներկայացուցչի լիազորությունները վաղաժամկետ դադարելու դեպքում անդամակցության դադարեցման օրվանից հետո 5-օրյա ժամկետում, սույն գլխի կանոնների համաձայն, կազմակերպվում է նոր մրցույթ:

36. Սույն կարգի 34-րդ կետով սահմանված դեպքերում նոր ընտրված հասարակական միավորման կամ գիտական կազմակերպության ներկայացուցիչը խորհրդին անդամակցում է մինչև սույն կարգի 33-րդ կետով նախատեսված ժամկետի լրանալը մնացած ժամանակահատվածում:

37. Քարտուղարությունը սույն կարգով սահմանված ընթացակարգով կազմակերպությունների ընտրության օրվանից սկսած՝ 4 տարին մեկ անգամ հրապարակում է խորհրդի կազմում հասարակական միավորումների և գիտական կազմակերպությունների ընտրության մասին նոր հայտարարություն՝ համաձայն սույն գլխի դրույթների: Խորհրդի անդամ հանդիսացող հասարակական միավորումները և գիտական կազմակերպությունները կարող են խորհրդի անդամի թեկնածություն հայտ ներկայացնել հաջորդ շրջափուլում: Մինչև նոր ընտրության ավարտը նրանք շարունակում են պահպանել խորհրդում անդամությունը:

ԳԼՈՒԽ 5. ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՆԻՍՏԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

38. Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ: Անհրաժեշտության դեպքում՝ խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ խորհրդի նախագահի տեղակալի կամ խորհրդի անդամի առաջարկությամբ կարող է գումարվել արտահերթ նիստ:

39. Խորհրդի նիստերն անցկացվում են առկա եղանակով: Նիստը նախագահողի որոշմամբ նիստը կարող է անցկացվել նաև առցանց՝ էլեկտրոնային տեսահաղորդակցման միջոցով կամ էլեկտրոնային փոստով փաստաթղթաշրջանառության միջոցով:

40. Խորհրդի նիստերն անցկացվում են խորհրդի կողմից հաստատված օրակարգով: Նիստը նախագահողը որոշում է խորհրդի նիստի անցկացման ձևաչափը, վայրը, օրը և ժամը:

41. Քարտուղարությունը յուրաքանչյուր կիսամյակին նախորդող ամսվա մինչև 5-ը խորհրդի նախագահին է ներկայացնում նիստի օրակարգի առաջարկվող նախագիծը և քննարկվող հարցերի փաթեթը: Խորհրդի անդամներին օրակարգի նախագիծը և քննարկվող հարցերի փաթեթը ներկայացվում է 5 աշխատանքային օր առաջ:

42. Խորհրդի նիստի օրակարգում լրացուցիչ հարցեր ներառելու առաջարկություններ կարող են ներկայացնել խորհրդի անդամները՝ նիստի օրակարգի նախագիծը ստանալու օրվանից 2 աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարությանը այդ մասին գրավոր տեղեկացնելու միջոցով՝ կցելով տվյալ հարցի վերաբերյալ փաստաթղթերն ու տեղեկատվությունը: Լրացուցիչ հարցը նիստի օրակարգում ներառելու որոշումը կայացվում է նիստի օրակարգի նախագծի հաստատման շրջանակում:

43. Խորհրդի նիստերը արձանագրվում են:

44. Քարտուղարությունը նիստի ավարտից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում խորհրդի անդամներին է տրամադրում սույն կարգի 45-րդ կետով նախատեսված քվեաթերթիկը:

45. Խորհրդի անդամները քվեաթերթիկը ստանալուց 3-օրյա ժամկետում քարտուղարության էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկում են քարտուղարության կողմից կազմված գրավոր քվեաթերթիկը՝ քվեարկած կողմ կամ դեմ:

46. Խորհրդի անդամի կողմից քվեաթերթիկը ստորագրվում է առձեռն (թղթային) կամ քվեարկության հատուկ էլեկտրոնային համակարգի (ծրագրային ապահովման) միջոցով (առկայության դեպքում):

47. Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք:

48. Խորհրդի անդամի կողմից քվեաթերթիկը սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստով չուղարկվելու դեպքում համարվում է, որ տվյալ անդամը կողմ է քվեարկել:

49. Խորհրդի որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

50. Հասարակական միավորման կամ գիտական կազմակերպության՝ որպես խորհրդի անդամի անդամակցության դադարեցման դեպքում, մինչև սույն կարգի 34-րդ կետին համապատասխան նոր անդամի ընտրության գործընթացի ավարտը, քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում տվյալ անդամի քվեն գումարվում է կողմ ձայներին:

51. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ներկայացուցչի պաշտոնեական լիազորությունների դադարեցման կամ այլ կերպ նրա մասնակցությունը խորհրդի աշխատանքներին անհնար դառնալու դեպքում՝ 5-օրյա ժամկետում տվյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը (լիազորությունների դադարեցման պարագայում՝ համայնքի ղեկավարի իրավասությունները ժամանակավորապես իրականացնող անձը) ներկայացնում է նոր անդամի թեկնածություն:

52. Քարտուղարության առաջարկությամբ և խորհրդի նախագահի համաձայնությամբ խորհրդի նիստերին դիտորդի կարգավիճակով կարող են հրավիրվել պետական, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերին առնչվող մասնագետներ, աշխատանքային խմբերի փորձագետներ, զարգացման գործընկերների, գիտական, կրթական, հասարակական և առևտրային կազմակերպությունների, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ:

ԳԼՈՒԽ 6. ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՄԱՆ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

53. Նիստի արձանագրության մեջ նշվում են՝

1) նիստի անցկացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և վայրը, նիստն սկսելու և ավարտելու ժամերը և նիստի անցկացման ձևաչափը.

2) նիստի օրակարգը.

3) նիստին մասնակցող խորհրդի անդամների, դիտորդի կարգավիճակով հրավիրված անձանց անունը, ազգանունը, պաշտոնը և կազմակերպության անվանումը.

4) քննարկվող հարցերի զեկուցումների և ելույթների հիմնական դրույթները.

5) քվեարկության արդյունքները.

6) ընդունված որոշումները, դրանց տարածման և հրապարակման եղանակները:

54. Նիստի արձանագրությանը կցվում են քննարկված հարցերին վերաբերող նյութեր, այդ թվում՝ իրավական ակտերի և այլ փաստաթղթերի նախագծեր (հայեցակարգեր, ռազմավարություններ, հաշվետվություններ և այլն), զեկույցների և ելույթների գրավոր տեքստեր, առաջարկություններ, կարծիքներ, քվեարկության թերթիկները կամ քվեարկության էլեկտրոնային համակարգից քաղվածք:

55. Նիստի արձանագրությունը ստորագրում է նիստը նախագահողը՝ քվեարկությանը հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում:

56. Քարտուղարությունը խորհրդի նիստերի արձանագրությունները ստորագրվելուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում դրանք տրամադրում է խորհրդի անդամներին և հրապարակում լիազոր մարմնի պաշտոնական կայքում:

57. Նիստերի արձանագրությունները պահվում են քարտուղարությունում՝ առնվազն սույն կարգի 33-րդ կետում նշված ժամկետում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Լ. ՄԱԿՈՒՆՑ

02.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ